

# Կարեն Մխոյան

email: mxkar@yandex.ru

Հեռ.: 077-11-99-88, 060 531893

---

## Աշխատանքային կենսագրություն:

2015թ-Ներկա	”Քաղաքաշինություն և տնտեսություն” ՀԿ	Հիմնադիր-նախագահ
2011-2014թթ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	Շինարարության քաղաքականության վարչության պետ
2010-2011թթ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	Շինարարության քաղաքականության վարչության գնագոյացման բաժնի պետ
2000-2005թթ	“ՏԱՆԱՎԱՍ” ՍՊԸ	Հիմնադիր -տնօրեն
1999-2009թթ	Աբովյանի քաղաքապետարան	Քաղաքաշինության բաժնի պետ
1997-1999թթ	Աբովյանի քաղաքապետարան	Քաղաքաշինության բաժնի մասնագետ
1995-1997թթ	Նախագծա-արտադրական բյուրո	Ճարտարագետ

## Կրթություն:

2005-2008թթ	Հայաստանի Հանրապետության պետական կառավարման Ակադեմիա, “Հանրային կառավարում” մասնագիտությամբ	Հանրային կառավարման մագիստրոս
1990-1992թթ	Հայաստանի Պետական Ճարտարագիտական համալսարանի հասարակական մասնագիտությունների ֆակուլտետ	Իրավագետ

**1988-1993թթ** Երևանի Ճարտարապետաշինարարական  
համալսարան

Ճարտարագետ  
– շինարար,

**Ծառայություն բանակում**

**1993-1994թթ** ՀՀ ՋՈՒ

**Այլ տվյալներ**

ՀՀ քաղաքաշինության նախարարին կից խորհրդի անդամ: ՀՀ քաղաքաշինության նախարարի և Աբովյանի քաղաքապետի շնորհակալագրեր:

ԱՊՀ անդամ երկրների և Ասիայի և օվկիանիայի երկրների նախարարների խորհրդի աշխատանքային բազմաթիվ նիստերի և դասընթացների մասնակցություն, զեկույցներ և հավաստագրեր՝ «Ժողովրդավար առաջնորդության ձեռքբերում», «Բյուջեի վերլուծություն» և «ԲՀԿ-ների կարողությունների զարգացում» և այլն:

**Լեզուներ:** Հայերեն, Ռուսերեն, Անգլերեն

**Համակարգչային**

**գիտելիքներ:** MS Windows, MS Office, ArchiCAD, AutoCAD

**Հետաքրքրություններ** Ճամփորդություն, ձկնորսություն, լող, ստեղծագործական աշխատանք

**Ընտանեկան**

**կարգավիճակը** Ամուսնացած եմ, ունեմ 2 երեխա

ՀՀ վարչապետի պաշտոնակատար  
պարոն Ն. Փաշինյանին  
Երևան քաղաքի Թումանյան 272, բն. 3-ի  
բնակիչ Կարեն Մխոյանից  
Հեռ.:077 11 99 88

## Մոտիվացիոն նամակ

Օգտվելով հնարավորությունից և ականջալուր լինելով ՀՀ վարչապետի պաշտոնակատար պարոն Նիկոլ Փաշինյանի հորդորին՝ ցանկանում եմ հայտնել իմ պատրաստակամությունը ներկայիս կառավարության կողմից իրականացվող պետականաշինության պատասխանատու գործընթացում պատվաբեր մասնակցությունն ունենալու հարցում:

Համայնքային և քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններում երկարատև քրտնաջան աշխատանքի արդյունքում հասնելով հնարավոր բարձրունքների՝ որոշեցի հիմնադրել հասարակական կազմակերպություն, որպեսզի ընդլայնեմ գործունեության ոլորտները, աշխատանքները դարձնեմ առավել թիրախավորված, վերհանեմ առավել շատ խնդիրներ՝ ներկայացնելով դրանց փաստարկված և իրատեսական լուծումները, ինչպես նաև ավելորդ ժամանակ չծախսեմ նախորդ համակարգում քաղաքացիական ծառայության գործառույթներին բնորոշ խնդիրների վրա:

Մեր երկրում կատարված փոփոխությունները առիթ են տալիս մտածելու, որ մասնագիտական և կազմակերպչական կարողությունների ներդրումը պետական ոլորտում այլևս չի վատնվելու ոչ կոմպետենտ և կոռուպցիոն դրսևորումների դոմինանտ լինելու պատճառով:

Կարծում եմ, լինելով նորագույն տենդենցների ջատագովը, ունակ եմ բարձր արդյունավետությամբ ծառայել Հայաստանի Հանրապետությանը, քանի որ վստահ կարողունակ եմ առնվազն շաբաթական վեց օր, օրեկան տաս ժամյա գրաֆիկով աշխատանքում մեծ ավյունով ներդնել շուրջ քսանհինգ տարվա ընթացքում կուտակված աշխատանքային(պրակտիկ և քաղաքականություն մշակող) փորձի և կրթության (անըդիստ կատարելագործվում եմ) շնորհիվ ձեռքբերած գիտելիքները և հմտությունները:

Ի լրումն ներկայացվող CV-ի հայտնում եմ, որ.

1.1995-1999թթ համարվել եմ ինքնակամ շինարարության կանխարգելման և կասեցման պատասխանատու,

2. Քաղաքաշինության բաժնի պետ աշխատելիս՝ իրականացրել եմ նաև գլխավոր ճարտարապետի գործառույթները,

3.Ղեկավարել եմ նաև նախագծման և շինարարության աշխատանքներ,

4. Որպես ՀԿ նախագահ՝ վերջին չորս տարիների ընթացքում փորձել եմ վեր հանել ՀՀ օրենսդրությունում առկա բացերը, որոնք առաջարկությունների ու դիտողությունների տեսքով ներկայացրել եմ ՀՀ կառավարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման, ՀՀ ֆինանսների և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություններ և ՀՀ քաղաքաշինության կոմիտե:

Հատկապես ուշադրության կենտրոնում եմ եղել.

1.Գործող գներով շինարարության արժեքի հաշվարկման կարգը և մեթոդաբանությունը,

2.Տարածքային համաչափ զարգացման, Երևան քաղաքի բեռնաթափման և տարածքային աճի բևեռների զարգացման հիմնախնդիրները,

3. Սեյսմակայուն շինարարությունը՝ դպրոցաշինություն և այլն,

4. Պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող շինարարությանը առնչվող խնդիրները,

5. Քաղաքաշինության ոլորտի նորմատիվ իրավական ակտերը,

6. Համայնքային և պետական սեփականություն համարվող հողատարածքների օտարման և տրամադրման գործընթացում առկա կոռուպցիոն ռիսկերը,

7. Կառուցապատման, շինարարության ավարտի փաստագրման և պետական գրանցման հետ կապված գործընթացները կարգավորող օրենսդրական դաշտը,

8. Շինարարության ոլորտի զարգացման և մասնագետների դերի բարձրացման հիմնախնդիրները:

Նշված կետերի վերաբերյալ արդեն իսկ մշակված բարեփոխումների ծրագրային դրույթներից մի մասը, չնայած խոչընդոտների, կյանքի է կոչվել, իսկ որոշները քննարկման փուլում են:

Այս առիթը հնարավորություն կտա վստահության դեպքում քննարկման առարկա դարձնել ծրագրերը ամբողջությամբ, որոնց հիման վրա, իրականություն դարձնելով բարեփոխումները, կարճաժամկետ և երկարաժամկետ առումով կստանանք ցանկալի արդյունքներ:

Հ.Գ. Պարտավոր եմ նախապայմաններ ստեղծել, որպեսզի 6 և 8 տարեկան երեխաներս իրենց արժանապատիվ ապագան կերտեն մեր հայրենիքում: